Դարեր այս հակառակութեանց մէջ շարունակուելով՝ ժողովրդեան մէջ Հռովմայ գէմ նախանձու և ատելութեան ոգի մը տարածուած էր: Դերման ազգը յախշտակուած իր յատկութիւններէն՝ ինքզինքը ուրիշ ամէն ժողովուրդներէ վեր կը դասէր, և ընդհանուր տիրապետութիւն մը իրեն իրաւունքը կը համարէր. Հռովմայ կրօնական լուծն իսկ ծանր կու գար իր ազգայնամոլութեան: Եւ երբ Լուտեր իր անձնական մէկ խնդիրէն մղուած, ապոտամբութեան զրօշը բարձրացուց եկեղեցւոյ իշխանութեան դէմ՝ պատարաստ գետին մը գտաւ և ահապին բազմութիւն մը հետեւեցաւ իրեն:

Եւ ինչպէս որ բիւզանդական կայսրութեան բաժնումամբը շատ մը արեւելեան փոքրիկ ազգեր յորձանքէն տարուելով յարեցան հերձուածին, այսպէս ալ եւրոպական շատ մը ժողովուրդներ, որոնք վարժ էին հետեւիլ գերմանական ազգեցութեան, չկրցան դիմադրել նոյն իսկ այդ սոսկ կրօնական խնդրոյն մէջ:

Անգլիոյ մէջ ևս թէպէտեւ ի սկզբան իրենց հաստատ հաւատքը դիմադրեց՝ սոսկ անձնական կիրքերէ մղուած թագաւորի մը յարուցած հերձուածին և բազմաթիւ զոհերով ջանացին պահել եկեղեցւոյ սուրբ միութիւնը, բայց վերջապէս, արդէն իրենց յատուկ նկարագիրը եղող այլամերժ զգացումներու ազգեցութեան տակ, կամաց կամաց թուլցան, և բաժանումը շատ աւելի հիմնական եղաւ, այնպէս որ ամբողջ դարեր՝ ուղղափառութեան գրեթէ և ոչ իսկ նշոյլ մը կրնար տեսնուիլ այս երկրին մէջ:

Գաղղիոյ մէջ ևս թագաւորները և կառավարութիւնները իրենց մասնակի շահերը նկատի առնելով, երբեմն ալ սոսկ քրիստոնէութեան դէմ կռուելու նպատակով, քանիցս ուղեցին նոյնպիսի բաժանումներ յառաջ բերել, իրենց իշխանութիւնը աւելի բացարձակ ընելու մասք և մասամբ իւրիք յաջողեցան կալլիպանիզմի դրութեամբ, որուն հետեւեցան նաեւ կարգ մը եկեղեցականներ, որոնք իշխանութեան խնկարկուներ ըլլալով և կամ ազգային առանձնայատուկ իրաւունքներու շլացուցիչ գաղափարէն տարուած՝ չկրցան իրենց պաշտօնին վեհութիւնը պահել:

Այսօր իսկ կառավարութիւնը այդպիսի բաժանում մը յառաջ բերելու մասք իր ամբողջ ուժը կը թափէ: Սակայն հոն կրօնական համազմանց աւելի խորաթափանց ըլլալուն և միւս կողմանէ իրենց քաղաքակրթութեան և բնածին յատկութեանց համաշխարհային բարեմասնութիւններու հետեւանքով, անջատման ոգին բաւական վնասներ հասցունելով հանդերձ, չկրցաւ գործել այն աւերները զոր ուրիշ տեղեր բրած էր:

Այս կրօնական բաժանումները գոնէ ազ-

(*) Տե՛ս թիւ 434, էջ 59:

գութեանց տեսակէտով սարսափած օգտակար արդիւնքը տուին արդեօք: Աւա՞ղ, Եւրոպայի ներկայ վիճակը բացայայտ և միանգամայն տխուր պատասխան մըն է:

Ազգայնամոլութեան և անկախութեան արդիւնք եղող բողոքականութիւնը անտարակոյս չէր կրնար չեզոքացնել իւր ծննդեան պատճառները: Կրօնական խնդիրներու մէջ անհատական ազատութիւն քարոզելով և իւրաքանչիւրի թողովով ուզածին կամ խելքին համաձայն ըմբռնել աստուածային յայտնութիւնքը պարունակող գրքերն՝ կարճ միջոցի մէջ բողոքականութիւնը յառաջ բերաւ ընդհանուր անհաւատ փիլիսոփայութիւն մը որ ամէն տեսակ և իրարու յողորովին հակառակ արատոց գաղափարներու հաւաքով մըն էր, և որն որ մարդկութիւնը դարերով ետ դարձնելով հեթանոսութեան դարերուն հաոցոյց և զուցէ անյուշ լակ. վասն զի կարծեմ թէ հեթանոսութեան մէջ իսկ գաղափարներու այս աստիճանի խառնաշփոթութիւն մը տեղի ունեցած չէ:

Ազգութեանքներու, սխալ թէ ուղիղ, միշտ իրենց արդիւնքը տալով, ահա այսօր աչքի առջև ունինք ազգերու խուժը մը որ իրենց յարաբերութեանց մէջ վերցնելով գերազոյս իշխողի մը գաղափարը, ինչպէս նաև եղբայրակցութեան և արդարութեան սկզբունքները որոց միայն անունները կը պահեն, իրենց քաղաքականութեան ուրիշ ուղեցոյց չունին եթէ ոչ մտանալի շահերու և զանոնք ձեռք բերելու իբր միջոց՝ սոսկ իրենց արամադրելի ոյժն:

Ահա այսպէս կը պարզուի գինեալ Եւրոպայի մը սարսափելի տեսարանը ուր ամէն տէրութիւն իւր հակառակորդէն աւելի ուժով ըլլալուն մէջ կը գտնայ միայն իւր խաղաղութեան ապահովութիւնը. ապահովութիւն որ կախում ունի միայն ահագին ճիգերով և ծախսերով ձեռք բերուած գինեալ հաւասարակշռութենէ մը, որնոր եթէ ու և է պարապայի բերմամբ փոքր ինչ գթէ ամէն ինչ տակնուվրայ պիտի ըլլայ. տէրութիւնները իրարու վրայ պիտի յարձակին զիրար ոչնչացնելու անյաբ տենչն ի գործ դնելու

համար: Մարդկային ընկերութիւնը՝ ամէն վայրկեան սպառնացող այս ահադին պատերազմի մղձաւանջէն զատ՝ իր առջև ցցուած կը տեսնայ՝ այդ բողոքածախս հաւասարակշռութեան հետեւանքն եղող անտեսական տագնապի արդիւնք ընկերվարականութեան զարհուրելի հրէշը որ օրէ օր յառաջանալով կը պատրաստուի ամէն ինչ քարուքանդ ընելով՝ ոչնչացման հաւասարութեան ենթարկել ընկերութիւն մը որ մերժեց ընդունիլ քրիստոնէական ընկերաիրութիւնը:

Եւ ահա յառաջգիւժութիւն կոչուածը որ ուրիշ բան չէ եթէ ոչ դէպի հեթանոս դարերն հսկայաքայլ յետադիմում մը, արդիւնք՝ Բրիտանոնէութեան գրած հիմէն մարդկութեան հեռանալուն և անաստուած վարչութիւն մը ստեղծելով՝ կառավարութեանց Եկեղեցւոյ իշխանութենէն ապստամբելուն:

ՍՅԼԵԻԱՅԼՔ

1913Ը ՇԱՏ ՆՇԱՆԱԻՈՐ ԵՂԱԻ Անգղիոյ Կաթողիկէից համար: Այս երկրին մէջ, Կաթողիկէից թիւը անընդ կերպով աճեցաւ: Ամենէն հաւատով վիճակագրութեանց նախընթաց Անգղիոյ Կաթողիկէից հաւատին մէջ միայն Կաթողիկէ Ժողովրդեան թիւն է այժմ 2,100,446. մինչդեռ անցեալ տարի էր 1,793,038: Ասկէ վատ կառուցուեց եւ քառասուն նոր եկեղեցիներ: Յատկանշական և յուսադրելի է նաև հանդիսաւորապէս Կաթողիկէութիւնը ընդգրկողներուն թիւը (6,322), որոնց մէջ կը գտնուին բաղմաթիւ ազնուականներ, բարձրաստիճան պաշտօնեաներ և բոլորքական ժառանգաւորներ:

Տակաւ առ տակաւ աւելի եւս երեւան կու գան հերձուածող աղանդներու անդամանելի երկպառակութիւնն ու տկարութիւնը:

Իր վերջին գրքին մէջ Մ. Հ. Կ. Ուէլս, հռչակաւոր վեպագիր, որ սակայն Կաթողիկէ չէ, առանց տոտամեղելու կը հաւատէ թէ ամէն մարդ համազուած է որ, հաւատքի եւ ազատամտութեան միջեւ տեղի ունենալիք պայքարին մէջ, միայն Կաթողիկէ եկեղեցին պիտի կարենայ անստուգածութեան դէմ կանգնել:

Ուրիշ ծանօթ բողոքական մը, Մ. Աթէլսթան Ռիւէյ, անկիւնեան ժողովի մը մէջ, որուն կը նստաւ գահէր, սաղէս արտաւայտեց իր միտքը. «Երբ Եւրոպան նկատի առնուի, կը տեսնենք որ Բողոքականութիւնը կամաց կամաց կը դադրի այն տեղ

կրօնական մեծ կազմակերպութիւն մը ըլլալէ: Սուրբ Գրոց գլխավոր պաշտպանները բողոքականաց շարքերուն մէջէն չեն: Մարգարէութեան եւ փրկագործութեան վսեմ ճշմարտութիւնները աշխարհ չեն ալլելու Բողոքականութեան պատկերներուն ետեւ, այլ Հռոմայ Եկեղեցւոյն պատուարներուն պաշտպանութեան տակ:

1870ին, փետրվարի 28-ին ՊԱՇԱՐԱՄԱՆ ատեն Գրիգորիանայ Դպրոցներու եղբայրներէն մին՝ Ծաղկախոտավարակ զինուոր մը կը խնամէր:

Մարգ մը տեսնելով անոր քաջասրտութիւնը ըսաւ.

— Այդ քու ըրած գործդ՝ ես տառը հազար Ֆրանքով չէի ընէր:

— Ես, պատասխանեց Եղբայրը, հարկեր հազար Ֆրանքով ալ չէի ընէր:

Ապա իր իաջնութիւնը համբուրելով յարեց.
— Բայց ես այս գործը կ'ընեմ Յիսուսի համար:

ԱՆԻՅՈՐ ՔԱՀԱՆԱՅ ՄԸ ներս կը մտնէ: Մարգ մը լուսամուտին դիմացը տրտում տխուր կեցած է: Կ'ընէ վառարանին մօտ նստած կ'արտասուէ:

— Շատ մտածկոտ եւ վշտահար կ'երեւաք. ի՞նչ ունիք այսօր, կը հարցնէ քահանայ:

— Միշտ միեւնոյն բանը, վա՛րդապետ:

— Ձեր դաւա՛կը, այնպէս չէ՞:

— Այո՛, անիկա, միշտ անիկայ. ահա նորէն արտաքսուած է արուեստանոցէն. եւ այս՝ երբորդ անգամ:

— Չէ՞ք կրնար դէնքը ուղղել:

— Ձերը ուղղել՝ Ա՛հ, գոչեց մայրը հեծկտալով. եթէ գիտնայիք թէ ի՛նչպէս ծաղր կ'ընէ մեր խօսքերը: Վայրկեան մը ականջ կը դնէ. յետոյ ուսերը թոթուելով դուրս կեցէ՛լ սիրտը ուզած ատեն միայն տուն դառնալու համար:

— Նայինք, բարեկամներ, դուք ձեր ծնողաց հետ աշուպէս կը վարուէիք:

— Մե՛նք, ո՛հ, աղաղակեց հայրը, արտասուած թոր աչքերով. եթէ երբէք ես մայրս լացուցեր եմ... Մեր տան մէջ էր հայրերնիս խօսէր, տեսնելու էր...:

— Խօսք մըն ալ. ձեր որդին աղօթք կ'ընէ՞ երբեմն.

— Թշուառակա՛նը: Այլեւս երեսը իաջ հանել իսկ չի գիտեր:

— Դուք, երբ իր տարիքն ունէիք իաջ կը հանէի՞ք.

— Անտարակոյս, վա՛րդապետ. մեր Հայրն ու Մայրը շատ բարեպաշտ էին, եւ մեզի կատարել կուտային մեր կրօնական պարտքերը: Կիրակի օրերը զմեզ պատարագի կը տանէին եւ իրիկունը... ահա՛ սա պատկերին առջեւ ծնրադիր կ'աղօթէինք: Մենք մեր ծնողքը կը սիրէինք, անոնց կը հնազանդէինք, բայց ինքը...

— Լա՛ւ դրեմն, բարեկամ, ըսաւ քահանայ հօրը ձեռքը սեղմելով, կը հասկնա՞ք ինծի զուրկածնիք: Դուք ձեր ծնողաց կը հնազանդէիք, որովհետեւ անոնք զձեզ Աստուծոյ կը հնազանդեցնէին. դուք ձեր ծնողքը կը սիրէիք, վասն զի անոնք ձեզի սիրել կու տային զԱստուծոյ: Կը յիշէ՞ք որ շատ անգամ ձեզի ըսած եմ. «Դուք թոյլ կուտաք որ ձեր որդին պատարագ չտեսնէ, քրիստոնէական վարդապետութեան ներկայ չգտնուի. դպրոցին մէջ Աստուծոյ վրայօք խօսք մը իսկ չի լսեր. զգո՛յ՜ զի ցէք... ձեզի արցունք թափել պիտի տայ:

Բարեկամ, դուք հեռացաք Աստուծոյէ. անոր համար միաբանութիւնը, հնազանդութիւնը, երջանկութիւնը հեռացաւ ձեր անէն: Մօտեցէ՛ք Աստուծոյ, որպէս զի կարենաք իազաղութիւն եւ սփոփանք գտնել:

ԺՈՂՈՎՐԴԱՊԵՏ ՄԸ՝ աւելավաճառ արբածի մը հանդիպելով ըսաւ.

— Բարեկամ, քանի՞ անգամ քեզի ըսեր եմ թէ ըմպելիքը քու ամենէն սոսկալի թշնամիդ է. եւ դուն նորէն արբած ես:

Արբածը պտտախառնեց,

— Վա՛րդապետ, միւս կիրակի, քարոզի ատեն մեզի կը սորվեցնէիք թէ պէ՛տք է որ մեր թշնամիները սիրենք:

— Այո՛, այո՛, պտտախառնեց, ժողովրդապետը, Աւետարանը կը պատուիրէ թշնամին սիրել, բայց ոչ թէ կուլ տալ:

ՎԵՐԱՊԱՏՈՒՆԻ Հայր Մոնղա, Ֆրանչիսկեան կրօնաբան-նղբարց կառնէն, եւ Պ'ոս Ժ. հայրենակից, 1911 Հոկտ. 23-էն ի վեր կը վարէ փոքր-նղբարց կարգին ընդհանուր պաշտօնէի կարեւոր գործերը:

Հայր Մոնղա պատեհ առիթէ մը օգտուելով նամակ մը ուղղեց Ն. Վ. Լիւնուան-Հունդի, Չինու Հանրապետութեան փոխ-Նախագահին եւ չինական բանակին ընդհանուր սպայակոյտին Պետին:

Այս նամակին մէջ, Ֆրանչիսկեան կարգին ընդհանուր պաշտօնեան շնորհակալութիւն կը յայտնէ այն բարեացակամ տրամադրութեանց համար, զորս Չինու արդի կառավարութիւնը ցոյց կուտայ Ֆրանչիսկեան առաքեալներու, որոնցմէ այժմ տառաւառեալ եպիսկոպոս կը գտնուին Չինաց մէջ. եւ կը կառավարեն տառաւառական փոխարորդութիւններ:

Չինու Հանրապետութեան փոխ-Նախագահը պատասխանեց հետեւեալ շատ փափկանկատ եւ յարգալիք նամակով.

«Վերապատուելի՛ Հայր,

«Ընդունեցայ բարեկրթութեամբ եւ քաղաքավարութեամբ ՚՛ նամակդ: Կրկին կարգացի գոյն եւ ինքնութիւն կը զգամ շփոթած եւ յուզուած այն մեծ գովեստներէն զորս ինծի կ'ուղղես: Կաթողիկէ

կրօնը մեր չինական գաւառներուն մէջ մոռու գտած է վաղեմի ժամանակներէ ի վեր. անոր բարերար ազդեցութիւնը խոր արմատներ ձգեր է մեր ժողովուրդներուն սրտին մէջ:

Յաճախ կ'ընթեռնուի Սուրբ Կիրքը եւ ինքզինքս հակամէտ կը զգամ զանոնք սիրելու: Արդ, Հանրագետութիւնը վերջապէս հաստատուած է ամուր հիմերու վրայ եւ այս երկիրը բնակող չինացիները հասարակաց միեւնոյն օրէնքներով կը կառավարուին: Մենք ոտուգիւ կաթողիկէ կրօնին պէտք ունինք, վարդապետութեան եւ առաքինութեան մէջ զարգանալու եւ քաղաքական կեանքի գետնին վրայ եւս յառաջդիմելու համար:

Թէեւ ստորագրեալը՝ կառավարութեան մասնակից ըլլալու արժանիքները չունի, սակայն գիտէ թէ պարտական է զամէսքը հաւատարմացնել եւ Հանրագետութեան օրինաց տրամադրութեան համեմատ պաշտպանելու: Այս կերպով, ամէնքը խաղաղութեամբ պիտի վայելին հանրային երջանկութիւնը, ինչպէս որ դուռն ալ, վերագատուելի Հայր, եռանդաւորն կը բաղձաւ:

Սոյն այս նամակով, բոլոր սրտանց կը յայտնեմ քեզի իմ շնորհակալութիւններս եւ կը մագթեմ քեզի քաջաւորչութիւնն եւ ամէն յաջողութիւն:

«Լի-Յի-Ան-Հի-Սի»

«11 Նոյեմբեր»

Նամակին վերջը հետեւեալ հրամանը կայ.

«Յղի՛ր՝ Հան-Քուի խաղաղական շիւղատեսակները, որպէսզի այս նամակը ապա հասցուի Սուրբ Ֆրանչիսկոսի կրօնաւորական կարգին ընդհանուր պաշտօնեայ Հայր Մոնգային»:

Մեծ ուրախութեամբ կարճանագրենք ՅՁՁ միւլիոն վեց հարիւր հազար ժողովուրդ ունեցող Հանրագետութեան Փոխ-Նախագահին այս նամակը: Այս թուղթը ակներեւ ցոյց կուտայ այն յարգանքը զոր կաթողիկէ կրօնին սկստմամբ ունի շինուլայնածաւալ պետութեան երկրորդ Պետը:

Սակայն պատշաճ է ըսել թէ Հանրագետութեան Նախագահ Գուան-Շի-Քա կը փափաքի Կոն-փիւկիոսի կրօնը իբր պետական կրօն հրատարակել, միւս կրօններն ալ թոյլատրելով հանդերձ:

Նախագահին այս խորհուրդը յայտնուելուն պէս, Գրիստոնեայ յարանուանութեանց եւ իսլամութեան եւն, կրօնական իշխանութեանց պաշտօնական ներկայացուցիչները բողոքեցին ուժգնօրէն եւ խնդրեցին պաշտամունքի ազատութիւնը: Ինչի կաթողիկէներն իսկ բացարձակ վստահութիւն չունին Նուան-Շի-Քա Նախագահին վրայ:

Կը մտաւորենք որ գործերը համապատասխանեն վերագրեալ նամակին մէջ արտայայտուած զգացումներուն:

ԻՏԱԼԻՈՅ ԵՒ ՀՌՈՄԻ ՀՐԵԱՆԵՐՈՒՆ ՎԻՃԱԿԱՅՈՅՅԻՒՆ.— 1901ի Իտալական մարդահամարին ժամանակ (1900) հոգի արձանագրուած էին իբր կրօնքներն անծանօթ. 36,000 հոգի իրենք զիրենք անկրօն յայտարարել են եւ 35,000 հոգի ալ հրեայ:

Աւստի զլոր հաշուով բնակչութեան հազարին մէկը հրեայ էր:

Նոյն առումէս ի վեր դաւանական վիճակացոյց չէ հրառարարուած: Իսոյց հաստատուած է թէ չինգ տարուան մէջ Հրէից թիւը մէկ երրորդ մը աւելցած է եւ 1900ին հասած է 45,885ի. եթէ բաղմաւորուի շարունակուած է, հիմա իտալիոյ թագաւորութեան մէջ 10 հազար հրեայ գտնուելու է:

Հրէից ամենէն կարեւոր համայնքը Հռոմին է, որ իսկ հաստատուած է Գրիստոնի թուականէն առաջ: Կայսերայ օրով կը բնակէին թրանսլիթիւնի կողմը, ուր Ս. Պետրոս տաճարականութիւն գտաւ Ապուլա անունով տրադարձ հրէի մը կողմէ: Ս. Գահանայապետներու իշխանութեան օրով հետզհետէ հրաման ընդունեցան նաեւ ուրիշ թաղեր բնակելու:

Տիբերիոս Կայսեր օրով թրանսլիթիւնի Հրեաներուն թիւը արդէն 8000ի կը հասնէր:

Հռոմի մէջ ամենէն աւելի հրեայ կը գտնուի. հիմա անոնք նոյն քաղաքին մէջ իւր 12,000 են, թիւրքերի մէջ 1905ին՝ 6,100, Լիվորնոյի մէջ՝ 4,200, Միլանի մէջ՝ 3,600, Վենետիկի մէջ՝ 2,850, Ֆլորանսի մէջ՝ 2,150, Ֆերրարայի մէջ՝ 1,700, Սանդուայի մէջ՝ 1000:

Հրէից կրօնական պաշտօնէից թիւը 1905ին կը հասնէր 10ի սրունք կը պաշտօնավարէին 57 Սինա-կոկաներու մէջ:

ԿՈԼՈՒԱ ԹԻՐԹԻՆ ՄԷՋ հետեւեալը կը պատմուի կրօնասէր եւ հայրենասէր ֆոլ Տէրուլէտի վրայօք, որ ամուսնու ոկիւնները վախճանեցաւ եւ անհամեմատ հանդէսով եւ ժողովրդական խանդավառ ցոյցերով թաղուեցաւ փառքի մէջ:

Օր մը Մ. Մէդիէն այցելութեան գնաց ֆոլ Տէրուլէտի, անոր Սէն-Սէպասթիէն ամառանոցին մէջ, եւ տեսաւ թէ բուռն եւ արդար զայրոյթով մը լեցուած էր ցածրագի օրագրողի մը դէմ որ զանկէ կայ վատաբար նախատած էր իր սղորմելի թերթին մէջ:

— Ես այդ մարդը կը ճանչնամ, ըսաւ Մ. Մէդիէն: Գծեալստին մէկն է, որ շատ ...ամ հաց չի կրնար հասցնել իր դաւաններուն:

Յաջորդ օրը, Տէրուլէտ, Կոյ թղթածրար մը տուաւ Մ. Մէդիէնի, որ փառքի պիտի երթար, խնդրելով որ հաճի յանձնել զայն զինք նախատող օրագրողին: Ծրարը կը պարունակէր 1000 Ֆրանքոն թուղթ մը:

ԳՍԹՈՒՆԻՔ ՄԵԶԷԴՈՒ ԷՍՍՍԼԱՐԸ (*)

(Տեվամի)

Հայկան իշուն պէօյէ տէյիլ տիր. չիւն-
քի օ կէօրիւր, իշիտիր, եօլընը պուլապիլիւր,
սահիպինի թանըր, պիր շէյին քէնտինէ գա-
րաքը օլմուշ օլտուղընը տէրխաթըր իտէր,
վէ սայիրէ: Մա մաֆիյհ հայկանըն պու իլ-
մի մահաուտ տըր, Էօեայի մահսուսէ վէ մե-
վասը մախսուսէ տայիրէսինտէն տիշարը
չըգամաշ: Հայկանտա ումուժի իսեալաւ Էօգ
տըր, օ եալընը հաստէսինէ թապի օլանը,
մատտի վէ խուսուսի օլանը թանըր. մէսէլա
ֆիլան աղաճը, ֆիլան չիշէյի կէօրիւրսէ տէ,
աղաճ վէ չիշէյին ումուժի ֆիլիքիսէ գատար
Էիւքսէլէմէզ: Պուսըն կիպի տէ քէօրէք,
քէմալը մահուլիշէթլէ պիր աթէշ Էանընտա
Էաթարագ ըսընը, հալպուքի քէնտիլիյին-
տէն պիր աթէշ Էապմագ Էախօտ Էանան ա-
թէշին սէօմէմէսի իշուն, իւզէրինէ օտուն
գոմագ կիպի պիր չէյ գաթիէն տիւշինէմէզ:

— Ինսան Սայր ու Շէրրի Մանէվիյի թա-
նըր: Ինսան Էաքաղըն էյիլիքսէն մեմնուն,
ֆէնալըգտան իտէ վիճառնէն մուլազլապ օ-
լուր: Հայկան իշուն քէնտի հաստէլէրինէ
խօշ օլանտան պաշգա էյիլիք վէ զարալը
օլանտան մատա տա ֆէնալըգ Էօգ տըր:
Շէօյէ քի, հիշ պիր հայկանտա վիճառն իւ-
թիրապը էսէրի կէօրէմէզսին: Ֆիքրին զը-
տաօը օլան հագիգաքը թանըմաղը կիպի,
իրատէթին գուվվէթի վէ գալպին մէսէրրէ-
թի օլան վազիֆիյի տէ թանըմագ, չիւնքի
խայր ու շէրրի մանէվի՝ անճագ իտրաք ու
զէքիս սայէսինտէ թանըլապիլիւր:

2. Ինսան թէագգուլ իտէր, իճատ էյլէր,
թէրագը կէօսթէրիւր, սէօյէր:

Ինսան պիզլաթ քէնտի ֆիքրինի թահիլ
էյլէր, մուլաքսէսէ վէ մուհաքէմէ իտէր, Թա-
նըտըղը էսաօր քիւլլիշէլէրտէն նէթիճէլէր
իւթիթալ իտէր, Եաքաղընը հիսապ էյլէր,
նէ՞ Էաքաղընը վէ նէ՞ իշուն Էաքաղընը
պիլիւր: Թապիթըն գուվվալը միւսթէթի-
րէսինի քէշֆ իլէ օնլարտան պիլ իսթիֆա-

տէ, ագըլարա հայրէթպախշ օլան իիթիրա
ու իյճատլարտա պուլընըր: Թէագգուլ իտէ-
պիլմէք մէլէքէսի սայէսինտէ ֆիլանուն վէ
սանաեի սահէլէրինտէ կիւնտէն կիւնէ իլէ-
րի կիտէր վէ Էէնի Էէնի իյճատլար հուսու-
լա կէթիլիւր: Աճէպա, Էալընը շու աօրը-
մըղըն պու խուսուստաքի թէրագըլէաթը
շայանը հայրէթ տէյիլ մի տիր:

Հայկան թէագգուլ իտէմէզ, հիսապ էյ-
լէյէմէզ, նէ՞ Էաքաղընը վէ նէ՞ իշին Էաքաղ-
ընը տա պիլմէզ. օ անճագ սեվգի քապիլի-
սինէ թապի տիր: Պիր հայկան հիշ պիր վա-
գըթ նէ Էաղը, նէ հիսապ, նէ թարիս, նէ
ճօղրաֆիյա. նէ իւլուժը միւսթէնէվիա վէ նէ
տէ հաթթա պիր ալֆապէ պիլէ էօյրէնէմէզ:
Իսթիրաւա պուլընմագ վէ հիշ պիր Էաքի
քիւրագը կիսթիքիսէ: Պու կիւնքի գուշ-
լար Էուվալարընը, թամ իսիգաթըն ֆէրտա-
սը կիւնիւնտէ Էաքըլան շէքլ ու սուրէթտէ
Էաքաղըր:

Էվվէթ, ինսան, հայկանաթըն հաստէ-
լէրինտէն, գուվվէյի մուսապիլիւրէսինտէն
վէ թէխաթիւլաթը մահաուսէսինտէն պիլ
իսթիֆատէ, օնլարըն պաղը նագալընըն
իսլահնա, պաղի Էէնի շէյլէրէ իթիհատընա
միւվէֆֆապ օլապիլիւր, ֆագաթ հայկան
Էէնիլիլիսէն հիշ պիր թէրագըլա միւսալու
տէյիլալիւր: Պէշէր օնը իտարէ վէ թէհիլպ
իտէր, լաքին օ, ֆիքրի թէշէպպիւստէն պի
պէհրէ տիր:

— Եալընը ինսան թէքէլիւմ իտէր:
Ինսան աղ ու իտրաքը սայէսինտէ հէմ շի-
ֆահիլ վէ հէմ տէ քահրիրի քէլամա, նութ-
գա մալիք տիր: Տիւշիւնտիւլիւնիւ սայիր-
լէրինէ տէ նագլ իթմէք նիյեթի սարիհա
վէ հագըղիյէսի Էալընը ինսանտա մէվճուտ
տըր: Պաշգալարընը տիւշիւնտիւլէրինի
տէրք իտէր, պիր վագըթ վագը օլմուշ օլան
վէ հիշ պիր սուրէթլէ քէնտի թապիթըլա
միւնապաթը պուլընմայան շէյլէրի սէօյէր:

Հայկան հիսա իթտիյի մահուլիշէթի վէ
Էա էլէմի պէյան իթմէք իւզըն, զայրը իլ-
թիյարի օլարագ, իշֆի սիյահ էյլէր, ֆագաթ
ֆիքրիտէն մահուլա պուլընտաղը հատէպիյ-
լէ լիսանտան տա մահուլա տըր: Էն էյի

(*) Տես թիւ 132, էջ 77

թէր պիտէ օլընմըշ պիր բարաղան պիտէ գու-
րուլը պիր մաքիմասան ֆարպը պիր շէյ տէ-
յիլ տիր: Հալպուքի էն ճահիլ ֆարպ օլու-
նան պիր վահշի պ'լէ, տիւշիւնտիւշիւնիւ
իֆատէյէ գատիր տիր:

Յ. Եալընըզ ինսան հարաքէթինտէ սէր-
պէսթ տիր: Ինսան գարշըսընա չըգան միւսի-
թէլիֆ շէյլէրտէն պիրինի ինթիսապա հիւրը
տիր: Պիր շէյ եարսըղը վազըթ քէնտի քէն-
տինէ տէյէպիլիր քի, իսթէրսէիսիմ եաբ-
մազըրմ:

Հայվան իսէ սէրպէսթ տէյիլ պիր. օ,
պիր քէօր սեկզի քապիինին տէլալէթինէ
թապի տիր քի տիւշիւնմէյէ վէ ինթիսապ
էթմէյէ միւսասատէ էյլէմէզ: Պու սէպէպէ
մէպնի տէ հարաքէթընտան տօլայը մէսուլ
տէյիլ տիր: Պիր եանըլըզ իլլէտիքտէն սօն-
բա հայվանա վէրիլէն ճէգանըն մագաստը,
հիսս իթտիլի աղըրնըն սէպէպիլլէ եինէ օ
շէյէ տիւշմէքտէն մէն իթմէք իշուն տըր:

— Նիհայէթ, ինսանտա Ալլահա տայիր
պիր ֆիքիր վար տըր, օ, ֆիքրինի քէնտի
խալիզի օլան Ալլահա գատար եիւքսէլլէթ
պիլիր վէ օնը թալիմ իթմէյէ գապիլլիլէթի
վար տըր: Ինսան պիր ալսրէք, կիլէնէք պիր
եօմը իւմիտինի հայիլ տիր, վէ պու խասի-
յէթ ինսանտ օ տէրէնէ թապիի տիր քի
էսկի բութէրէսթլէր ինսանը սահիլի մեզ-
հեպ պիր հայվան եօլընտա թարիֆ իտէր-
լէրտի:

Պագընըզ, թապէն. վէ գուվվէթէն հայ-
վանաթտան զիյատէ զաիֆ օլմասընա բաղ-
մէն, ինսան օնլարը թահթը զապթընա ա-
լապիլիյօր, օնլարը թէնիս իսիյօր, քէնտի
իհթիյաճ ու միգաճընա խըտմէթ իթտիրէ
պիլիյօր: Ինսան, սայիր մախլուգաթը ար-
զուսընա կէօրէ գուլլանմաղա գատիր պար-
զը կիպի, հայվանաթը տա գուլլանըյօր: Այրը
այրը բուպար իսիյտիկինտէ քէնտիսինին
եիւզ միսլի գուվվէթէ մալիք օլան պիր սը-
ղըր սիւրիսալնիւ էն քիւշիւք պիր չօճուզ
պիլէ իտարէյէ քեաֆի տիր: Պու հիւքմիւ
ինսանա պախշ էյլէյէն նէ տիր: Օնըն ճիւ-
մի օլտուղ. պու թապիի տիր վէ զայէթ ա-
իքեար տըր: Ինսանը աիկէր հայվանաթա

ֆայիգ զըլան օնըն բուհը տըր, բուհը միւս-
րիֆի ալր, քի սատէ տիր վէ ճէնապը Ալլա-
հըն սուրէթինտէ խալզ օլուսմըշ աըր:

Ինսան խիլգաթտա պիր մէվճուտիյէթի
եէկեանէ տիր, օ, քէնտի իւզէրինտէ ճիւ-
մանի վէ բուհանի հէր իքի թապիաթը տա
ճամի տիր, շէյլէ քի հաստէլէրի վատիթա-
սըյլա ալէմի ճիւմանի իլէ վէ իտարազը վա-
սիթասըյլա տա ալէմի բուհանի իլէ մընա-
սէպէթտէ պուլընըր:

(Մապաի վար)

Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ր Ա Կ Ա Ն

ՀԱՌՄ ԵՒ ԿԱԹՈՂԻԿԷ ԱՇԽԱՐՀ.— Վսեմ:
ձեռնարի Կարգինալը, Գահերէց Ժողովոց Ժո-
ղովն (Congrégation du Concile), Կարճատու հի-
ւանդուլթեմէ մը վերջը վարճանեցաւ: Թէեւ վսեմ:
Հանգուցեալը, քաղաքական դեր մը կատարած չըլ-
լալով, Սուրբ Ժողովն Հանրածանօթ անգամներէն
շէ, սակայն շատ հմտագոյններէն մին է: Ս. Պիոս
Ժ. ին մեծապէս սիրելի էր իր հեզ և ամուր նկարագրին
համար: Իր մահուամբ Կարգինալաց Թիւր Կ'իշնէ Յճի,
որոնց 30ը իտալացի են, իսկ 2ձը օտար:

Կաթոլիկէ Գործակցութեան Հսովի վարչու-
թիւնը իրեն նոր նախագահ ընտրեց Փիօ Ֆոլքի
ազնուականը: Ընկերութեան գիւտը կազմակերպ
միտաձայն հաւանութեամբ ժողովրդական Միութեան,
ընկերական-սոստանական Միութեան, ընտրական Միութե-
ան եւ Երիտասարդութեան Իսլամական
պատուիրականներուն:

Նորընտիր նախագահը շրջաբերական նամակ մը
ուղղեց Հսովի բոլոր ժողովրդագետներուն, որուն մէջ
կ'ըսէ թէ՝ բարձրագոյն իշխանութեան հաստատու-
թիւնը ընդունելէ յետոյ իրեն պարտք կը համարի
ամէն բանէ առաջ իր մեծարանքը մատուցանել
քաղքին ժողովրդագետներուն:

Ապա Մ. Փիօ Ֆոլքի կաւեյցնէ.

«Ես համոզուած եմ որ մեր կազմակերպութեան
կենդանատու զօրութեան կեդրոնը ժողովրդագետու-
թիւնն ըլլալու է: Հսովն է որ ամէն ճշմարիտ Կաթո-
լիկէ կը գտնէ հոգեւոր միթմարութիւն, Աստուծոյ
խօսքը, ընկերակցութեան համար պէտք եղած ուժը:

«Եւ ժողովրդագետութեան մէջ կը կազմակերպուի
քրիստոնէական ճշմարիտ զգացումը մասնակցու-
թեամբ աշխատէն կրօնական գործերուն, գործը
ժողովրդագետաց եւանգելիստի ու բարեկամութիւնը
հաստատուի են: Եկեղեցւոյն օրինաց գրօտրութեամբ
յառաջ եկած եղբայրակցութիւնը՝ հաւատացեալաց
մէջ հաստատուելու համար:

«Հասկանալի է, որ ընկերութեան ամէն գործերը պիտի յաջողին, երբ անոր անդամները ժողովրդապետութեան մէջ ընդունին հոգեկան առաջին դասադասակարգութիւնը, և կապով ու պատրաստ ըլլան արիւրաւ յանձն առնելու այն զոհողութիւնները, որ կարենաւ են ամէն բարի գործերու կատարման համար»:

ՆԵՐՔԻՆ ԵՒ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՈՐԾԵՐ.— Արեւելեան Անաստուրի վարչութեան խնդիրը, որ ցարդ ծանօթ բանակցութեանց առարկայ եղաւ, նպատակաւ կերպով և վերջնականապէս լուծուած է: Ինչոր կէտերուն մասին չամսօմայութիւն գոյացաւ:

*. Ի՛նչամ գոհութեամբ կը ծանուցանէ բարենորոգմանց մասին գոյացած համաձայնութիւնն և կ'ըսէ թէ այլեւս Թուրքիոյ և Ռուսիոյ միջեւ անհամաձայնութիւն մը չկայ: Ռուսիոյ հետ բարեւոյ յարաբերութիւններ, մանաւանդ այս միջոցին, Օսմանեաններուն համար շատ իմաստուն և նպատակաւոր մար քաղաքականութիւն մ'է, որով երկրորդ կ'ազատի ներքին ու արտաքին ամենէն ծանր մտահոգութիւններէն: Օսմ. կառավարութիւնն այլեւս ուղղածին պէս կրնայ գործադրել Արեւելեան Անաստուրի բարենորոգումները: Բէյամ կը յարէ.— «Սահմանադրական ներկայ վարչութիւնը բարենորոգումներէ զատ ուրիշ ինչ քաղաքական կրնայ ունենալ: Միթէ բռնակալութեան շրջանին մէջ ենք որ մեր կառավարութիւնը բարեւ ու չարը չկրնայ զանազանել, և մեր Հայ հայրենակիցներուն ուղղածն ընելով, արեւելեան նահանգներուն անգործութիւնն ու բարեկեցութիւնն ապահովով մեր գոյութիւնը չազատէ այդ վտանգներէն»:

*. Օսմ. համալսարանին մեծ սրահին մէջ տեղի ունեցաւ թուրք կիներու յատուկ դասընթացքի մը բացումը: Ներկայ էին 250 կիներ, կրթական նախարարի խոհրդականը ճառ. մը խօսելով թուրք այս դասընթացքին օգուտներն և ըսաւ թէ անցեալին մէկ սխալն է որ այսպիսի ձեւերով մը տեղի չէ ունեցած միջեւ հիմա Յետոյ իմայիլ Հազգը պէյ սկսաւ առաջին դասախօսութեան:

*. Բարիդէն կը հեռագրուի Փետր. 10 թիւով.— Վերջին պահուն ծանր անհամաձայնութիւն մը յառաջ եկաւ Երբեակ Զինակցութեան և Երբեակ Համաձայնութեան տերութեանց միջեւ, որովհետեւ այս վերջինները կ'ուզեն ճնշողական միջոցներ գործադրել Թուրքիոյ հանդէպ, որուն զճառապէս կը հակառակին Երբեակ Զինակցութեան տերութիւնները: Արդարեւ հաւաքական գիւմուսին յապաղումն ուրիշ պատճառ չի կրնար ունենալ, քանի որ բոլոր տերութիւնք սկզբամբ համաձայն են կղզիներու խնդրոյն մասին: Մանաւանդ Ֆրանսա, որ կ'ուզէ Յունաստանի դէպքի տղեկցութիւնը պահպանել և տնտեսական մեծ մասնէ շահել ռուս Թուրքիոյ մէջ, այն տերութիւնն է որ ամենէն աւելի կը պնդէ ճնշումի վրայ, բայց կը յուսացուի թէ, կ'ըսեն քաղաքական շրջանակներու մէջ, ետ պիտի կենայ իր տեսակետին և հաւաքական ծանուցագիրը պիտի կրնայ շուտով յանձնուի Աթէնքի և Կ. Պոլսոյ 'Իսհիճնեւուն:

*. Կառավարութիւնը Փետր. 11ին իրիկունը Մամուլին հաղորդեց Արեւելեան նահանգներու բարենորոգմանց ծրագրին ամփոփումը:

Այս ծրագրին համեմատ Արեւ. Անաստուրի նահանգները քննական երկու օրանակի պիտի բաժնուին. կարգուելիք երկու ընդհ. քննիչներ փոքր պետութեանց հպատակներէն պիտի ընտրուին, ընկարծակ իրաւասութիւններով:

Տեղական լեզուներն ալ պիտի գործածուին պատշտական յարաբերութեանց մէջ:

Խաղաղութեան ասեմ ամէն անհաս զինուորական ծառայութիւնը պիտի կատարէ իր բնակավայրին ենթակայ եղած զինուորական քննչութեան օրանակին մէջ: Տեղական ընտրութիւնները իսլամ եւ ոչ-իսլամ անհասներու թիւին համեմատութեամբ պիտի կատարուին: Հանրային պատշտականներու ընտրութեանց մէջ իսլամ եւ ոչ-իսլամ հպատակները հաւասարութիւն պիտի վայելեն:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Դէպքեր եւ սկզբունքներ	97
Պիւ վանդինին «գարձ»ը	99
Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի Միջնութիւնը	100
Տեառն Կամբասայ Քանակային պատմութիւն Օսմանցոց	102
Եօթնեակ Քրիստոսէի	104
Ազգ եւ Կոմի	106
Այլեւայլ	107
Գաթուիք Մէգիէպի էսասլարը	110
Տեղեկագրական	111

ԱՐՏՕՆԱՏԵՐ



ՏՆՍՐԵՆ-ԽԱՐԱԳՐԱԳԵՐ



ԳԵՌԳ Ծ. ՎԱՐԴ. ԲԵՐԶԻՊԵՆԵԱՆ

ՅՈՎ. Ծ. Վ. ԿԵՏԻԿԵԱՆ

Տպագր. Կ. Անճապանց. Հարաքարքի, Բիւր. Պարսկ փողոց Եւ Ծ. Կ. Պարսկ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ .— Թուրքիոյ համար տա-
րեկան՝ 40 դհկ. արծ. վեցամսեայ՝ 20 .— մէկ թիւ՝ 1 դհկ. .— Արսասան-
ման տար. 3ր. 10. վեցամս. 5 .— Վճարմունք կանխիկ են :

ՀԱՍՑԷ .— Կաթողիկէ Արձագանգ, Բերա, 5. Պայրաւ փողոց 5, 4.
Պոլիս:

GATOGHIGUÉ ARTZAKANK

Péra, 5 Rue Baïram 5

Constantinople

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ.— 1.— Արձագանգ կը հրատարակուի
Շաբաթ օրերը: 2.— Խմբագրութիւնս պարտաւորեալ չէ ան-
պատճառ կամ նոյնութեամբ հրատարակել իրեն զրկուած ու եւ
յօդուած: 3.— Կեղծանունով զրկուած յօդուածներու հեղինակը
կը պարտի իր իսկական անունը ծանուցանել Խմբագրապետին:
4.— Ձեռագիրները ետ չեն դարձուիր: 5.— Յօդուածներու
ձեռագիրները պէտք է գրուած ըլլան թուղթին մէկ կողմը մի-
այն: 6.— Ծանուցմանց համար մասնաւոր պայմանագրութիւնք
կը կատարուին: 7.— Հասցէի փոփոխութեան համար պէտք է
անհրաժեշտ երկու դահեկանի նամակադրոյժ ի միասին ղրկել:

Տարր. Սկզբունք Քրիստ. Վարդապետութեան. գին 2 դհկն.:

Տէր Կոմիտաս Քահանային վարքը. գին 5 դհկն.:

ՏՊԱՐԱՆ Կաթողիկէ Արձագանգի Բերա, 5 Պայրամ փ. 5: Տպարանս ըստ ամենայ-
նի ճոխ և ի վիճակի է որ և իցէ տպագրական գործոց համար: Կը տպուին ամեն տե-
ռակ ծանուցմունք, գիրքեր, տետրներ, հրաւիրագիրներ, քարդեր, քարգ-ապրէսներ,
մահազգներ, եւն. եւն.: Գիները անմեղելի կերպով աժան են: Գեղեցկագիտական ճա-
ջակի և տպագրական մաքրութեան կողմէ յաճախորդները անտարակոյս գոհ պիտի
նան:

WIENER BANK-VEREIN

FONDÉ EN 1869

Capital entièrement versé 130.000.000 de couronnes

Réserves: 40.000.000

SIÈGE CENTRAL à VIENNE : I. Schottenring

SUCCURSALES EN AUTRICHE-HONGRIE

Agram, Amstetten, Aussig, Bielitz-Biala, Bozen, Bruenn, Budapest, Budweis, Czernowitz, Friedek-Mistek, Graz, Innsbruck, Jaegenndorf, Karlsbad, Klagenfurt, Krakau, Lemberg, Marienbad, Meran, Oest, Nowosielitza, Pardubitz, Pilsen, Prag, Prossnitz, Przemyśl, Salzburg, St. Pölten, Tarnow, Teplitz, Teschen, Villach, Wr. Neustadt, Zwittau:

SUCCURSALES EN TURQUIE :

Constantinople et Smyrne.

La Succursale de Constantinople (avec Siège de Galata, Place du Pont de Karakeuy et Agences à Stamboul, Péra et Scutari) fait toutes opérations de banque, telles que:

Avances en Compte-Courant nanties par des titres ou des effets de commerce.

Avances sur Marchandises.

Achat et vente de change sur l'Etranger.

Escompte d'effets de commerce.

Emission de chèques, et de lettres de crédit.

Ordonnancements télégraphiques sur la Turquie et l'Etranger.

Encaissement d'effets sur la Turquie et l'Etranger.

Encaissement de coupons, d'obligations amorties ou favorisées aux tirages.

Ouverture de Comptes-Courants, ainsi que d'accréditifs simples et documentaires.

Exécution d'ordres de Bourse.

Garde de valeurs publiques etc. etc.

Caisse d'Epargne.

Locations de coffre-fort.